

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵԶ
(ՊՈԱԿ)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ք. ԱՐԱՐԱՏ 2021Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուսումնանյութական բազան	3
Աշխատակազմը	4-5
Ուսանողների համակազմը	6
Ուսումնական աշխատանքներ. ուսանողների առաջադիմությունը	6-7
Շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը	8-9
Կարիերայի ստորաբաժանում	10-13
Միջին մասնագիտական կրթական համակարգ	14-15
Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական համակարգ	16-19
Հանրակրթություն	20-31
Տնտեսագիտական բաժին	32-37
Լեզվամանկավարժական բաժին	38-43
Պրակտիկա	44-49
Գրադարան	50-53
Մանկավարժ-հոգեբան	54
Մեթոդ խորհուրդ	55-57
Վարչատնտեսական	58
Զինղեկ և ՔՊ շտաբի պետ	59-60
Ուսանողական խորհուրդ	61
Կազմակերպադաստիարակչական աշխատանքներ	62
Որակի ենթակառուցվածք	63-64
Կառավարման խորհուրդ	65
Ֆինանսներ	66
Եզրակացություն և առաջարկություններ	67-68

ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱ

Արարատի պետական քոլեջում ուսումնական պարապմունքները կազմակերպվում են 1987թ-ին շահագործման հանձնված տիպային նախագծով համալիրի մեկ ուսումնական մասնաշենքում:

Քոլեջում ընթացիկ տարում գործել է 18 առարկայական կաբինետ, կահավորված են ուսումնական գործառույթին ներկայացվող չափորոշիչներին, տվյալ առարկայի բովանդակությանը, ուսումնառության պահանջներին համապատասխան: Գործում են արհեստագործական 5՝ «Խոհարարական գործ», «Համակարգիչների շահագործում», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Գինեգործություն և հյուրերի արտադրություն» մասնագիտությունների կաբինետները: Գործում են գրադարան և ընթերցասրահ, մարզադահլիճ, մարզահրապարակ, մշակույթի դահլիճ, բուժկետ, Արմաթ լաբորատորիա: 2020-2021 ուստարում ուսումնանյութական բազան հարստացվել է անհրաժեշտ գրականությամբ և դիդակտիկ նյութերով:

Ուսումնական մասնաշենքի օգտագործելի տարածքը կազմում է 1860մ², մասնաշենքի շրջակա տարածքը 10063մ² է:

ԱՂՅՈՒՄԱԿ 1. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Տեխնիկական միջոցներ	Քա- նակը	Սպասարկվող լսարան. թիվը	Ուսանողների թիվը	Մեթոդական գրականություն	Մասնագիտա- կան	Գեղարվես- տական	Բաժան. թիվը
Համակարգիչ	41	3	486				
Հեռուստացույց	8	7	486				
Տեսամագնիստոֆոն	7	7	486				
Աուդիոմագնիստոֆոն	18	18	486				
Գրամեքենա	11	-	486				
Կինոսարքավորում	6	-	486				
Էպիդոսկոպ	2	1	486				
Դիպլոմատ	5	1	486				
Ուղիղ համգույց	1	-	486				
Սինթեզատոր	2	-	486				
Դաշնամուր	4	4	486				
Գրականության քանակը	3315	1	486	218	2837	260	112

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

/ԴԱՍԱԽՈՍՆԵՐ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐ/

2020-2021 ուստարում քոլեջում աշխատել է 42 դասախոս և արտադրական ուսուցման 5 վարպետ: Բոլոր դասախոսներն ունեն բարձրագույն կրթություն, արտադրական ուսուցման վարպետներից երկուսն ունեն բարձրագույն, երեքը՝ միջին մասնագիտական կրթություն: Դասախոսները հաճախակի մասնակցել են մոդուլային ուսուցման տարբեր սեմինարների, անցել մասնագիտական և մեթոդական վերապատրաստումներ:

Դասախոսական անձնակազմում ընդգրկված են ինչպես բազմամյա մանկավարժական փորձ ունեցող դասախոսներ, այնպես էլ երիտասարդ և բարձր որակավորում ու խորը գիտելիքներ ունեցող մասնագետներ: Նրանք հաճախակի մասնակցում են քոլեջի հետ համագործակցության պայմանագիր կնքած բոլոր բուհերի համապատասխան ամբիոնների դասախոսների հետ կազմակերպվող սեմինարներին, փորձի փոխանակում իրականացնում այլ ուսումնական հաստատությունների մասնագետների հետ՝ հարստացնելով և թարմացնելով ունեցած գիտելիքները:

Քոլեջի դասախոսները կատարելագործում են իրենց մասնագիտական գիտելիքները նաև մանկավարժամեթոդական և դաստիարակչական բնույթի զեկույցներով՝ հանդես գալով քոլեջի մեթոդական խորհրդի, մանկավարժական խորհրդի և ամբիոնների նիստերում, ակտիվ մասնակցություն ցուցաբերում քոլեջի հասարակական կյանքին:

Քոլեջում կազմակերպվում են նաև կարճաժամկետ ուսուցման դասընթացներ «Համակարգչային օպերատորություն», «Հասարակական սնունդ», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Դիմահարդարում», «Հաշվապահական հաշվառման ուսուցում ՀԾ և Excel ծրագրերի միջոցով», «Մատնահարդարում» մասնագիտություններով, որոնք վարում են քոլեջի հմուտ մասնագետները: Օրինակ՝ 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացքում սովորել են հետևյալ թվով դիմորդներ՝ «Համակարգիչների շահագործում»-10, «Հասարակական սնունդ»-5, «Կարի արտադրության տեխնոլոգիա»-2, «Հաշվապահական հաշվառման ուսուցում ՀԾ և EXCEL ծրագրի միջոցով»-2, «Մատնահարդարում» -1, «Գիտեգործություն և հյութերի արտադրություն»-2, «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»-2: Ընդհանուր՝ 24 սովորող:

Ուսումնական տարվա ընթացքում իրենց կազմակերպված, արդյունավետ և շնորհալի աշխատանքով աչքի են ընկել դասախոսներ Ս.Աբրահամյանը, Ռ.Վարդազարյանը, Ն.Յարությունյանը, Ա.Սարգսյանը, Ա.Մկրտչյանը, Ա.Սահակյանը, Մ.Խաչատրյանը, Ն. Գրիգորյանը, Գ. Վարդանյանը, Գ. Ստեփանյանը, Ռ. Մովսիսյանը և ուրիշներ :

2020-2021 ուսումնական տարում քոլեջում ուսուցումը տարվել է հետևյալ մասնագիտությունների գծով (1/8)՝ մասնագիտությունների համար՝ նաև հիմնական կրթության հիմքով /.

1. 0413.02.5 -«Սպասարկման կազմակերպում»
2. 0412.01.5 - «Ֆինանսներ»
3. 0411.01.5 -«Հաշվապահական հաշվառում»
4. 0414.01.5- «Շուկայաբանություն»
5. 0613.02.5-«Համակարգչային գեղարվեստական նախագծում»
6. 0613.01.5-«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»
- 7.0112.01.5 -«Նախադպրոցական կրթություն»
8. 1012.02.5 - «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»
9. 0916.01.5 - «Դեղագործություն»
10. 1013.03.4-«Խոհարարական գործ» /9-ամյա կրթությամբ/
11. 0721.03.4-«Գինեգործություն և հյուրերի արտադրություն» /9-ամյա կրթությամբ/
10. 0723.03.4-«Կարի արտադրության տեխնոլոգիա»
11. 1012.01.4-«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»
12. 0611.01.4-«Համակարգիչների շահագործում»
- 13 .0721.03.4-«Գինեգործություն և հյուրերի արտադրություն»:

2020-2021 ուսումնական տարում 486 ուսանողից տարվա սկզբում անվճար համակարգում սովորել է 356 ուսանող, վճարովի համակարգում՝ 130 ուսանող :

Ուստարվա վերջում 451 ուսանողից 333-ը սովորել է անվճար համակարգում, 118-ը՝ վճարովի:

2020-2021 ուսումնական տարում դիմորդների համակազմն ապահովելու նպատակով կազմակերպվել են հանդիպումներ մարզի դպրոցներում՝ աշակերտների և ծնողների հետ: Դիմորդների համար կազմակերպվել է մեկամսյա առարկայական խորհրդատվություն:

ԱՂՅՈՒՄԱԿ 2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՇԱՐՓԸ

№	Ուսանողների շարժ	Ուսանողների թիվը			Վարձի չափը				Սեռը		Կուրսերը		
		ընդհ.	Առկա ուսուցում				99000	120000	արական	իգակ.	I	II	III
			անվճար.	վճար.									
1	Ուսանողների թիվը տարվա սկզբում	486	356	130			118	12	245	241	250	120	116
2	Ուսանողների թիվը տարվա վերջում	451	333	118			109	9	229	222	227	113	111
3	Ելել են տարվա ընթացքում	14	8	6			2	3	8	6	1	1	12
4	Չորակոչվել են	5	5	-			-	-	5	-	-	-	5
5	Ավարտել են	140	127	13			9	4	58	82	30	-	110
6	Փոխադրվել են	309	171	138			131	7	170	139	-	196	113
7	Գերազանցության դիպլոմ են ստացել	22	19	3			3	-			1	-	21

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

2020-2021 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքները սկսվել են հուլիս ամսից և ավարտին են հասցվել օգոստոսի 31-ին, որին զուգահեռ ընթացել է ընդունելության գործընթացը: Ուսումնական գործընթացը կազմակերպվել է հաստատության ուսումնական պլաններով և ծրագրերով, տարեկան աշխատանքային և վերահսկողության պլանները ուղեցույց են հանդիսացել ամբողջ ուսումնական տարվա համար:

Ժամանակին կատարվել է դասաբաշխում, կազմվել են դասախոսների տարեկան ծանրաբեռնվածությունների, բաց դասերի, փոխադարձ դասալսումների, պարտադիր ստուգողական աշխատանքների, առարկայական հանձնաժողովների նիստերի անցկացման գրաֆիկները: Առարկայական հանձնաժողովներում քննարկվել են ուսումնական ծրագրերը և օրացուցային թեմատիկ պլանները և ներկայացվել հաստատման:

2020-2021 ուսումնական տարում ստեղծվել է 2 բաժին՝ լեզվամանկավարժական և տնտեսագիտական: Աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելու համար կազմվել են

տնօրինական, տարիֆիկացիոն, կուրսղեկական, գրադարանային, թոշակավորման, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների, որակի, գնումների, մեթոդական, ներքուլեռային վերահսկողության, մանկավարժական խորհուրդներ և հանձնաժողովներ: Նշանակվել են կուրսղեկներ և կաբինետների վարիչներ: Ուսումնական գործընթացի կազմակերպմանը անմիջական և ակտիվ մասնակցություն են ունեցել բաժինները՝ լեզվամանկավարժական, տնտեսագիտական, հանրակրթական, նախնական մասնագիտական /արհեստագործական / համակարգի, միջին մասնագիտական կրթական համակարգի, ինչպես նաև մեթոդական խորհուրդը:

Բաժիններում ընդգրկված դասախոսների, վարիչների, մեթոդխորհրդի, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում կատարվել է 340 ժամ դասալսում: Բաժիններն անցկացրել են 10 նիստ (4 նիստը՝ առցանց), որոնց ընթացքում քննարկվել են ուսումնամեթոդական հարցեր, տարբերակված ստուգարքների հարցաշարեր, պետական քննական տոմսեր, թեստեր ու այլ հարցեր:

Կազմակերպվել է 10 բաց դաս, իսկ 2020-2021 ուսումնական տարվա I կիսամյակում նախատեսված բաց դասերը չեն իրականացվել՝ կապված հանրապետությունում ստեղծված համավարակային արտակարգ իրավիճակի հետ: Ուսումնասիրվել է 8 առարկայի դասավանդման դրվածք: Դասախոսների տեսական, գիտական և մեթոդական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ամբիոններում ներկայացվել են մեթոդական զեկուցումներ հայ գրականության, մանկական գրականության, անգլերենի, ռուսերենի, հայոց լեզվի, գործարար հարաբերությունների, համակարգչային օպերատորության, հաղորդակցման հմտությունների, ֆիզիկական կուլտուրայի, ֆիզիկայի, խոհարարության, լոգիստիկայի, «COVID-19», սահմանադրական իրավունքի, սեփական կապիտալի և այլ թեմաների վերաբերյալ:

Ամբիոնների և ուսումնական մասի ուշադրության կենտրոնում են եղել պարտադիր ստուգողական աշխատանքների կատարումը, ստուգումը և օբյեկտիվ գնահատումը, ինչպես նաև մոդուլների արդյունքների հանձնման գործընթացի լիարժեք և հետևողական կազմակերպումը:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2020-2021 ուսումնական տարվա պետական ամփոփիչ ստուգումն անցկացվեց ըստ ուսումնական գրաֆիկի և սահմանված ժամանակացույցի: Պետական ամփոփիչ ստուգմանը թույլատրվել են 141 սովորող, որից 111-ը՝ միջին մասնագիտական կրթական համակարգից, 30-ը՝ նախնական (արհեստագործական) կրթական համակարգից:

Գերազանցության դիպլոմ ստացել են 22 ուսանող (21-ը՝ միջին մասնագիտական կրթական համակարգից, 1-ը՝ արհեստագործական), սովորական ավարտական փաստաթուղթ՝ 118 ուսանող (89-ը՝ միջին մասնագիտական կրթական համակարգից, 29-ը՝ նախնական /արհեստագործական կրթական/ կրթական համակարգից):

Պետական քննություններում գրանցվել է որակական հետևյալ առաջադիմությունը՝

0411.01.5-«Հաշվապահական հաշվառում»

Մասնագիտական մի քանի առարկաներից ու մասնագիտական մոդուլներից
18 ուսանող- 83%

0413.02- 5 «Սպասարկման կազմակերպում»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից
30 ուսանող - 45%

Մեկ ուսանող՝ Բաղդասար Վարազդատի Սաֆարյանը չի մասնակցել պետական ավարտական քննությանը և նրան չի շնորհվել մասնագիտական որակավորում:

0412.01.5- «Ֆինանսներ»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից
17 ուսանող -76%

0112.01.5-«Նախադպրոցական կրթություն»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից
12 ուսանող -100%

0414.01.5 - «Շուկայաբանություն»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից
11 ուսանող - 45%

1012.02.5 –«Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»

Համալիր քննություն մասնագիտական մի քանի առարկաներից և մոդուլներից
12 ուսանող – 58%

0916. 01.5-«Դեղագործություն»

Մասնագիտական քննություն մասնագիտական մի քանի մոդուլներից
11 ուսանող-91%

1012.01.4-«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»

Համալիր քննություն մասնագիտական մոդուլներից – 3 ուսանող - 100 %:

0721.03.4 –«Գինեգործություն և հյուրերի արտադրություն»

Համալիր քննություն մասնագիտական մոդուլներից- 10 ուսանող-100%

0723.03.4 -«Կարի արտադրության տեխնոլոգիա»

Համալիր քննություն մասնագիտական մոդուլներից -15 ուսանող –93%

0611.01.4-«Համակարգիչների շահագործում»

Համալիր քննություն մասնագիտական մի քանի առարկաներից - 2 ուսանող –100%

Միջին մասնագիտական կրթական համակարգից ԲՈՒՀ-երում կրթությունը շարունակելու են 30 շրջանավարտ:

Կարիերայի ստորաբաժանում

Նոր ուսումնական տարվա սկզբին ԱՊԲ-ի Կարիերայի կենտրոնը կազմել և ուսումնական հաստատության տնօրենին է ներկայացրել կենտրոնի աշխատանքային պլանը, որով էլ առաջնորդվել է ուսումնական տարվա ընթացքում:

2020-2021 ուստարվա համար Կարիերայի կենտրոնը իրականացրել է հետևյալ աշխատանքները՝ ոչ ֆորմալ դասընթացներ, զրույցներ, բանավեճեր, քննարկումներ, հանդիպումներ գործատուների հետ:

2020-2021 ուստարվա սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին անցկացվել են հետևյալ ոչ ֆորմալ դասընթացները՝ «Ինքնագնահատում» (ՈԻԹՀՌ վերլուծություն), «Կարողությունների, հմտությունների բացահայտում և ձևավորում», «Աշխատանքի որոնում և կարիերայի հնարավորությունների ուսումնասիրում», «Հաջողակ բիզնեսի և տարաբնույթ աշխատանքների կազմակերպման հմտություններ»:

«ՈԻԹՀՌ վերլուծություն» թեմայով ոչ ֆորմալ դասընթացը անցկացվել է միջին մասնագիտական և արհեստագործական դպրոցի սովորողների հետ: Դասընթացի նպատակն էր բացահայտել յուրաքանչյուր սովորողի ուժեղ և թույլ կողմերը, հասկանալ թույլ կողմերի վտանգները և խուսափել առաջացող ռիսկերից: Տվյալ թեմայի շուրջ անցկացվել է դասախոսություն, այնուհետև գործնական աշխատանք:

«Կարողությունների, հմտությունների բացահայտում և ձևավորում» թեմայի շուրջ անցկացվել է սեմինար, այնուհետև քննարկում կլոր սեղանի շուրջ: Այստեղ սովորողները իրազեկվեցին տվյալ մասնագիտությունների համար հմտություններ ձեռք բերելու հնարավորությունների մասին: Անցկացվել են տարբեր խաղային, դերային պարապմունքներ: Նպատակն էր ձևավորել տվյալ ոլորտի հմտություններ:

«Աշխատանքի որոնում և կարիերայի հնարավորությունների ուսումնասիրում» թեմայի շուրջ անցկացվել է դասընթաց, որը նպաստել է ՀՀ տարբեր հաստատություններում թափուր աշխատատեղերի լիարժեք իրազեկմանը: Ուսումնասիրվել են միջազգային աշխատաշուկան և հնարավոր միջոցները, որպեսզի ձեռք բերվեն մրցունակ լինելու հմտություններ տվյալ շուկայում: Նպատակը՝ լինել մրցունակ միջազգային շուկաներում:

Հեռավար համակարգով կազմակերպվել են հանդիպումներ գործատուների հետ՝ նպատակ ունենալով ստանալ տեղեկատվություն թափուր աշխատատեղերի և պահանջված գիտելիքների ու հմտությունների մասին:

Կիսամյակի ընթացքում անցկացվել է ոչ ֆորմալ դասընթաց «Հաջողակ բիզնեսի և տարաբնույթ աշխատանքների կազմակերպման հմտություններ» թեմայով:

Նպատակն էր ծանոթանալ տարբեր բնույթի աշխատանքներին, այդ աշխատանքները իրականացնելու հնարավոր միջոցներին, տեղեկանալ միջազգային շուկայի պահանջներին և պահանջված մասնագիտությունների ցանկերին:

2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ուսանողների և շրջանավարտների հետ անցկացվել են հանդիպումներ, որոնց նպատակն էր իրազեկվել նրանց հետագա անելիքների մասին: Անցկացվել է դասընթաց «Առաջնորդման և ղեկավարման հմտություններ» թեմայով, որի նպատակն էր ձեռք բերել ղեկավարման հմտություններ տարբեր մասնագիտությունների ոլորտներում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացի գիտելիքներից տվյալ մասնագետը պետք է օժտված լինի աշխատելու տարբեր հմտություններով, խաղային, դերային պարապմունքներ իրականացվեցին կլոր սեղանի շուրջ: Նպատակ էր ստեղծված իրավիճակում շատ արագ կողմնորոշվել և գտնել համապատասխան լուծումները:

2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել են առանձին գործատուների կողմից կազմակերպված սեմինարներին մասնակցություններ:

Անցկացվել է դասընթաց հետևյալ թեմայով՝ «Աշխատանքի նկատմամբ անձի մոտիվացիայի ձևավորում»: Նպատակն էր սովորողներին, ինչպես նաև շրջանավարտներին առաջնորդել դեպի աշխատաշուկա: Կլոր սեղանի շուրջ իրականացվել են քննարկումներ հետևյալ թեմաներով՝ «Գործատուին ներկայանալու հմտություններ», «Կարիերայի պլանավորում», «Անձնային տիպերն ըստ Ջոն Հոլլանդի»: Այս ամենը իրականացվեց անձի բացահայտման, նրա կորողություններն ու ունակությունները բացահայտելու և դրանք իրականացնելու նպատակով:

Ուստարվա ընթացքում իրակիանացվել են մի շարք անհատական խորհրդատվություններ: Այս տիպի խորհրդատվությունները անցկացվել են քոլեջում սովորող ավելի կաշկանդված ու փակ ուսանողների հետ՝ նրանց հմտություններն ու կարողությունները բացահայտելու նպատակով:

Ուսումնական տարվա ընթացքում կապ է հաստատվել քոլեջի շրջանավարտների հետ, որպեսզի տեղեկություն ստանանք նրանց աշխատավայրերի մասին: Այս աշխատանքը իրականացվել է հետևյալ նպատակով՝ հավաքագրել տվյալներ այն ուսանողների մասին, որոնք աշխատում են քոլեջից ստացած կրթությամբ և իրենց մասնագիտություններով: Այն շատ կարևոր է քոլեջում մասնագիտությունների հավատարմագրման համար: Այսօր քոլեջը, համագործակցելով մի շարք կազմակերպությունների հետ, տեղյակ լինելով աշխատաշուկայի պահանջներին, կարող է պատրաստել և առաջարկել մասնագետներ միջին մասնագիտական կրթությամբ:

Առաջին աղյուսակում 2020-2021 ուստարում կատարած աշխատանքների տվյալներն են:

Թեմայի վերնագիր	Մասնակիցների թիվը	Արդյունքի գնահատումը
Ինչ է մասնագիտությունը	100 հոգի	Լավ
ՈւԹՀՌ վերլուծություն	60 հոգի	Լավ
Հաղորդակցման կարողությունների ձևավորում	50 հոգի	Լավ
Հաջողակ բիզնեսի և տարաբնույթ աշխատանքների կազմակերպման հմտություններ	30 հոգի	Լավ

Անհատական հանդիպումներ	22 հոգի	Լավ
Շրջանավարտների հետ հանդիպումներ	50 հոգի	Լավ
Թեմայի վերնագիր	Մասնակիցների թիվը	Արդյունքի գնահատումը
Աշխատանքի նկատմամբ անձի մոտիվացիայի ձևավորում	50 հոգի	Լավ
Գործատուին ներկայանալու հմտություններ	30 հոգի	Լավ
Կարիերայի պլանավորում	100 հոգի	Լավ
Անձնային տիպերն ըստ Ջոն Հոլլանդի	30 հոգի	Լավ
Անհատական խորհրդատվություններ	30 հոգի	Լավ
Հանդիպում շրջանավարտների հետ	70 հոգի	Լավ

2020-2021 տումնական տարվա շրջանավարտներից աշխատանքի են անցել 37 շրջանավարտ, որից 30 աշխատում են իրենց մասնագիտությամբ:

Պետք է հաշվի առնվի նաև այն փաստը, որ ուսումնական հաստատության արական սեռի ներկայացուցիչների մեծ մասը գտնվում է ծառայության մեջ:

ՈւԻԹՀՌ վերլուծություն կատարած աշխատանքների վերաբերյալ:

Ուժեղ կողմեր:

Կարիերայի կենտրոնը ունի համապատասխան բոլոր հնարավորությունները լիարժեք ոչ ֆորմալ դասընթացներ անցկացնելու համար (համապատասխան գրականություն, ժամանակակից տեխնիկայով կահավորված համապատասխան լսարան) և այլն: Այս դեպքում Կարիերայի կենտրոնը կարողանում է տարբեր եղանակներով կապ հաստատել սովորողների հետ: Ակտիվ համագործակցում է գործատուների, ԶՊԳ-ների, տվյալ ոլորտի մասնագետների հետ:

Թույլ կողմերը:

Ուսումնական հաստատությունների Կարիերայի կենտրոնների պասիվ համագործակցությունը միմիանց հետ:

Ռիսկերը:

Կտրուկ ծրագրային, աշխատանքային ոճի, ծառայությունների փոփոխություններ:

Վտանգները:

Ծառայությունների ոչ լիարժեք մատուցում ժամանակակից տեխնիկայի բացակայության դեպքում:

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2021թ. հունվարի 8-ի մանկավարժական խորհրդի նիստում քննարկված և հաստատված ՄՄՀՈՒ բաժնի առարկայական աշխատանքային պլանները վերանայելուց հետո կատարվել է առարկայական օրացուցային պլանների քննարկում և որոշակի փոփոխությունների վերլուծում:

Ուսումնական առարկայական կաբինետների վարիչներին հանձնարարվել է ներկայացնել իրենց II կիսամյակի աշխատանքային պլանները: Նախատեսվել է համագործակցել գրադարանային խորհրդի հետ ուսումնական դասագրքերի, մեթոդական աշխատանքների կազմակերպման համար: Յուրաքանչյուր դասախոս համապատասխան ամբիոնների նիստերում ներկայացրել է քննարկված և հաստատված օրացուցային պլանները՝ կատարված փոփոխություններով հանդերձ: ՄՄՀ ուսումնական մասը իրականացրել է 40ժ դասալուսման միջին մասնագիտական համակարգի տարբեր կուրսերում՝ կատարելով համապատասխան գրանցումներ և վերլուծություններ դասալուսման մատյանում: Դասալուսման նպատակը եղել է դասախոսների մասնագիտական որակի բարձրացման, դասապրոցեսներին՝ խթանող մեթոդների կիրառության, արդյունավետության, ինչպես նաև ուսանողների՝ ուսման նկատմամբ շահագրգռվածության բարձրացումը: Ամբողջ կիսամյակի ընթացքում ստուգվել է դասախոսների մատենավարությունը, օրացուցային թեմատիկ պլանների համապատասխանությունը: Ընթացքում նկատված թերությունները անմիջապես շտկվել են: ՄՄՀ ուսումնական բաժինը ամենայն պատասխանատվությամբ առանձնացրել է առարկայացանկը, որում ներգրավված առարկաները ունեն մոդուլային հարցաշարեր, տարբերակված ստուգարքներ: Կազմվել է յուրաքանչյուր կուրսի տարբերակված ստուգարքների անցկացման ժամանակացույցը, ապա անցկացնելուց հետո կազմվել է արձանագրություն առաջադիմության և որակական ցուցանիշներով, վերլուծությամբ: Տարբերակված ստուգարքների վերլուծության հաշվետվությունը ներկայացվել է Որակի պատասխանատու Կ.Սարգսյանին: II կիսամյակի ընթացքում միջին մասնագիտական ուսումնական բաժինը անց է կացրել վեց նիստեր՝ իրենց համապատասխան աշխատանքային ժամանակացույցով: Նիստերից յուրաքանչյուրը արձանագրվել է: Ամբողջ կիսամյակի ընթացքում ՄՄՀՈԻ բաժինը իրականացրել է պրակտիկայի բաժնի միջին մասնագիտական համակարգում ընդգրկված կուրսերի պրակտիկաների ընթացիկ աշխատանքների վերահսկողություն: Հետևողականորեն իրականացվել է նաև մոդուլային ծրագրերի գնահատման թերթիկների, ամփոփագրերի ստուգումը: Ուսումնական մասը իրականացրել է ավարտական քննությունների հարցաշարերի, հարցատոմսերի կազմումն ու դրանց գործավարության իրականացումն ըստ ժամանակացույցի: Մայիս ամսվա վերջին տասնօրյակում II և III կուրսերի մատյանների, ստուգարքային գրքույկների գրանցումների ստուգումներ են անցկացվել և վերահսկվել է տարբեր ստորաբաժանումների և աշխատակիցների ընթացիկ գործունեությունը, վերլուծել դրանց արդյունքները: Իրականացվել է նաև նախաավարտական պրակտիկաների կազմակերպման աշխատանքների քննարկում: 2019-2020 ուստարվա արդյունքների հետ համեմատման արդյունքում ՄՄՀՈԻ բաժինը արձանագրել է հետևյալ աշխատանքային առաջընթացները.

- Յուրաքանչյուր մոդուլի վերահսկման գործընթաց էլ ավելի է մեծացրել թե՛ դասախոսի և թե՛ ուսանողի պատասխանատվությունը առարկայի դասավանդման, գիտելիքների ձեռքբերման գործում:

- Մենթորության կիրառությունը առավել արդյունավետ է դարձրել ուսումնական պրոցեսը, ինչպես նաև նպաստել նոր փորձի փոխանակման ու փորձի ձեռք բերման գործընթացի ճիշտ կազմակերպմանը:
- Անցած կիսամյակի համեմատ՝ այս կիսամյակում յուրաքանչյուր կուրսում առաջադիմության և որակի աճ է նկատվել (դրա մասին են վկայում որակական ցուցանիշների աճը):
- Ուսման օնլայն տարբերակում ի հայտ եկած թերությունները շտկվել են, իսկ նորմալ ուսումնական պրոցեսը նպաստել է ուսանողների շահագրգռվածության աճին՝ գիտելիքների ձեռք բերման գործընթացում:

ՄՄՀՈՒ բաժնի կատարած աշխատանքները կարելի է գնահատել լավ՝ նկատված թերությունները հաջորդ ուսումնական տարում շտկելու, էլ ավելի արդյունավետ աշխատելու նկատառումով:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ	ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ	ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ՌԻՍԿԵՐ
1.Կադրերի վերապատրաստման իրականացում 2.Կրթական, մշակութային և այլ բնույթի միջոցառումների իրականացում 3.Ուսուցման գործընթացի թափանցիկություն 4.Ուսանողների հաջողությունների մակարդակի տարեցտարի բարձրացում	1.Գործատուների՝ ուսումնական գործընթացում ներգրավվածության սակավություն 2.Ուսումնամեթոդական նյութերի, ձեռնարկների մշակման սակավություն:	1.Գինու արտադրության կազմակերպում 2.Պահանջվող, ժամանակակից մասնագիտությունների համալրում 3.Բիզնես սեկտորի և արտադրության համագործակցության ընդլայնում 4.Նոր տեխնոլոգիաների ձեռքբերում	1.Շահակիցների անպատասխանատվությունը 2.Սովորողների մոտիվացիայի պակասը 3.Ծրագրերի ոչ արդիականացումը 4.ՄԿՈՒ ոլորտում ներդրումների պակասը

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ /ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ/ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2020-2021 ուստարվա համար նախապես մշակված և տնօրենի կողմից հաստատված աշխատանքային պլանի համաձայն՝ իրականացվել է ուսումնական գործընթացի

վերահսկողություն նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական համակարգում:

Ուստարվա ընթացքում վերահսկվել է արհեստագործական բաժնի դասախոսների և վարպետների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարման ընթացքը:

Ժամանակին կազմակերպվել է դասամատյաններում դասաբաշխման և կուրսղեկների կողմից գրանցման իրականացումը:

Վերահսկվել է ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի պատրաստման գործընթացը:

Օնլայն հարթակում ստեղծվել է «Արհեստագործական բաժին» անվամբ խումբ, որի միջոցով մշտական կապ է պահվել բաժնի դասախոսների հետ: Տրվել են հանձնարարություններ, կարգադրություններ, ցուցումներ և վերահսկվել դրանց կատարումը:

Ամենօրյա հսկողության տակ է առնվել ուսանողների հաճախումը և մասնակցությունը դասերին: Հաճախումների վերահսկողության վերաբերյալ գրառումներ կատարվել են գրանցման մատյաններում:

Կրթական բարեփոխումների, մասնագիտական կրթության որակի ապահովման, գնահատման, ծրագրերի մշակման, հաստատման և իրականացման գործընթացների վերաբերյալ հրավիրվել են նիստեր՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան:

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ /ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ/ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

	Մասնագիտությունը	Հանձնված մոդուլների քանակը	Առաջադիմություն, որակ	Քննող դասախոս, վարպետ
1	2	3	4	5
1	«Խոհարարական գործ»	8	Առաջադիմ.՝ 100 %, Որակ՝ 27 %	Ա.Մկրտչյան
2	«Գինեգործություն և հյութերի արտադրություն»	6	Առաջադիմ.՝ 100 %, Որակ՝ 50 %	Լ.Չորբաջյան

2020-2021 ուստարվա II կիսամյակի ընթացքում նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական համակարգի հիմնական կրթությամբ մասնագիտական I կուրսերում հանձնված մոդուլների ամփոփիչ արդյունքները, չնայած մասնակի լավ պատասխաններին, գոհացուցիչ չեն: «Գինեգործ տղաների» մեծ մասն առավել պատասխանատվությամբ և լրջությամբ էին վերաբերվում մոդուլների հանձնմանը: Ենթադրվում է, որ կուրսերում աղջիկ ուսանողների բացակայությունը վատ է անդրադառնում ուսման որակի վրա: Եկող ուսումնական տարվա համար առաջարկվում է ուսման որակը բարձրացնող նոր մեթոդների, մասնավորապես ինտեգրված դասերի կիրառում (ինտեգրված դասեր՝ արհեստագործական և

միջին մասնագիտական կուրսերի միջև): Հուսադրող է այն փաստը, որ մենք ունենք մասնագիտությամբ հետաքրքրված, բնույթով հանգիստ ուսանողներ: Պետք է հնարավորինս ճկուն անցումային ռազմավարություն մշակել՝ ուսման որակը բարելավելու նպատակով:

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ /ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ/ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

	Մասնագիտությունը	Հանձնված մոդուլների քանակը	Առաջադիմություն, որակ	Քննող դասախոս, վարպետ
1	2	3	4	5
1	«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»	6	Առաջադիմ.՝ 100 %, Որակ՝ 78 %	Ն.Գրիգորյան
2	«Գինեգործություն և հյութերի արտադրություն»	6	Առաջադիմ.՝ 100 %, Որակ՝ 90 %	Տ.Գևորգյան
3	«Կարի արտադրության տեխնոլոգիա»	5	Առաջադիմ.՝ 100 %, Որակ՝ 100 %	Լ.Սարգսյան
4	«Համակարգիչների շահագործում»	7	Առաջադիմ.՝ 100 %, Որակ՝ 100 %	Մ.Գևորգյան Ն.Գասպարյան

2020-2021 ուստարվա II կիսամյակի ընթացքում նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական համակարգի միջնակարգ կրթությամբ մասնագիտական I կուրսերում հանձնված մոդուլների ամփոփիչ արդյունքները, համեմատած I կիսամյակի, բարձրացել են:

Պետք է նշել, որ մոդուլների հանձնման ընթացքում սովորողների պատասխաններն ու գործնական ցուցադրումները իրոք արժանի էին գովասանքի: Արհեստագործական կրթական համակարգի միջնակարգ կրթությամբ մասնագիտական I կուրսերում մոդուլների հանձնման ընդհանրացնող գնահատականը համարում ենք «գերազանց» «Համակարգիչների շահագործում» և «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտական կուրսերում և «լավ» «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Գինեգործություն և հյութերի արտադրություն» մասնագիտական կուրսերում:

Արհեստագործական կրթական համակարգի միջնակարգ կրթությամբ մասնագիտական I կուրսերում մոդուլների հանձնմանը հաջորդեց **ուսումնական և նախաավարտական պրակտիկաների** իրականացման փուլը:

Պրակտիկայի ընթացքում մեր ուսանողները ցուցաբերել են մասնագիտական հետաքրքրվածություն և հմտություններ, որի արդյունքում ոմանք ստացել են աշխատանքային առաջարկներ պրակտիկայի վայրից:

Մասնագիտական կուրսերի պրակտիկայի հաշվետվության պաշտպանությունից հետո իրականացվեց **ավարտական քննությունների** հանձնման փուլը՝ ըստ նախապես կազմված ժամանակացույցի:

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ /ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ/ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

	Մասնագիտությունը	Հանձնված մոդուլների քանակը	Առաջադիմություն, որակ	Քննող դասախոս, վարպետ
1	2	3	4	5
1	«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»	6	Առաջադիմ.՝ 100 %, Որակ՝ 78 %	Ն.Գրիգորյան
2	«Գինեգործություն և հյուրերի արտադրություն»	6	Առաջադիմ.՝ 100 %, Որակ՝ 90 %	Տ.Գևորգյան
3	«Կարի արտադրության տեխնոլոգիա»	5	Առաջադիմ.՝ 100 %, Որակ՝ 100 %	Լ.Սարգսյան
4	«Համակարգիչների շահագործում»	7	Առաջադիմ.՝ 100 %, Որակ՝ 100 %	Մ.Գևորգյան Ն.Գասպարյան

Ավարտական ամփոփիչ արդյունքները գերազանց էին:

Արհեստագործական բաժնի աշխատակիցները ամեն կերպ նպաստում են բաժնում նորագույն տեխնոլոգիաների ներդրման, գիտության և կրթության ինտեգրման գործընթացներին:

Արհեստագործական կրթական համակարգի միջին մասնագիտական կրթությամբ սովորողներն ապացուցեցին, որ հայ ազգն անկուրրում է, հայրենասեր, ձգտող և արարող:

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> ➤ Ուսումնական նյութերի առկայություն ➤ Հետաքրքրվածություն մասնագիտությամբ 	<ul style="list-style-type: none"> ➤ Տնային պայմաններում հմտանալու համար մասնագիտական սարքավորումների, պարագաների անբավարարություն կամ բացակայություն ➤ Դասագրքերի բացակայություն ➤ Ինտերնետից, առցանց հարթակներից օգտվելու սահմանափակ հնարավորություն
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՌԻՍԿԵՐ
<ul style="list-style-type: none"> ➤ Մեթոդների բարելավում ➤ Մասնագիտական հետաքրքրություն ձևավորում ➤ ՏՀՏ-ի կիրառում ➤ Սեփական կայքի ստեղծում ➤ Ուսումնառության առավել ճկուն մեթոդների կիրառում 	<ul style="list-style-type: none"> ➤ Արտակարգ իրավիճակներ / covid-19-ի, նոր վարակի բռնկում/ ➤ Նախասիրությունների, մասնագիտական կողմնորոշման փոփոխություն ➤ Վարձավճար մուծելու անկարողություն

Հանրակրթության բաժին

Հանրակրթական ծրագրով բաժնի աշխատանքներն իրականացվում են ըստ նախապես կազմված աշխատանքային պլանի, որը կազմվել է 2020-2021 ուստարվա սկզբին և հաստատվել է տնօրենի կողմից:

2020-2021 ուստարվա սկզբից քվեջում հանրակրթական ծրագրով ուսումնառվում է 11 | կուրս՝

1. <<Ֆինանսներ>>
2. <<Հաշվապահական հաշվառում>>
3. <<Սպասարկման կազմակերպում>>
4. <<Շուկայաբանություն>>
5. <<Համակարգչային գեղարվեստական նախագծում>>
6. <<Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում>>
7. <<Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ>>
8. <<Նախադպրոցական կրթություն>>
9. <<Դեղագործություն>>
10. <<Խոհարարական գործ>> (9-ամյա)
11. <<Գինեգործություն և հյուսերի արտադրություն>> (9-ամյա):

2020-2021 ուստարվա համար, ըստ աշխատանքային պլանի, նախատեսված են եղել հետևյալ աշխատանքները.

1. Հանրակրթական ծրագրով ուսումնառվող կուրսերի ուսանողների շարժի վերահսկում:
2. Պարտադիր ստուգողական գրավոր աշխատանքների նախապատրաստում և կազմում, դրանց ստուգման և գնահատման վերահսկողություն:
3. Համագործակցություն գրադարանային խորհրդի, կաբինետների վարիչների հետ:
4. Հանրակրթական ծրագրով ուսումնառվող կուրսերի դասամատյաններում դասախոսների գրանցումների ստուգում:
5. Դասալսումների իրականացում:
6. Հանրակրթական բաժնի ավարտական քննությունների թեստերի պատրաստում, քննությունների կազմակերպում, գործավարության իրականացում և ստուգում:
7. Ամփոփագրերի ստուգում:

1.Հանրակրթական ծրագրով ուսումնառվող կուրսերի ուսանողների շարժի վերահսկում:

Ուստարվա սկզբում քոլեջ են ընդունվել հանրակրթական ծրագրով ուսումնառվող 215 ուսանող, որից 187-ը՝ միջին մասնագիտական կրթական համակարգում, 34-ը՝ նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական համակարգում: Ուստարվա ընթացքում քոլեջից դուրս են եկել 18 ուսանող՝ իրենց դիմումի համաձայն: Նշված թիվը մեծ չէ, բայց պետք է տարվեն աշխատանքներ՝ այն նվազագույնի հասցնելու համար:

Մասնագիտական կողմնորոշման առաջնային և հիմնարար օղակը հանրակրթությունն է, որտեղ սկսվում են անձի մասնագիտության ընտրության և ինքնորոշման աշխատանքները: Քոլեջ ընդունված ուսանողները դեռ շարունակում են իրենց ուսումը հանրակրթական համակարգում և, ինչպես արդեն վերը նշվեց, դեռ մասնագիտական ընտրության և ինքնորոշման փուլում են գտնվում՝ չնայած այն բանի, որ ընդունվելիս արդեն ընտրել են մասնագիտություն:

Քոլեջից դուրս գալու հիմնական պատճառը լինում է այն, որ նրանք հասկանում են, որ այդ մասնագիտությունն իրենց համապատասխան չէ: Չեն գրանցվել դեպքեր, երբ այլ խնդրահարույց պատճառներով լինի ուսանողների դուրս գալը քոլեջից:

Պետք է առավել սերտ համագործակցել կարիերայի կենտրոնի պատասխանատուի հետ և մշակել կամ գտնել այլ մեթոդներ՝ նման դեպքերը կանխելու համար:

Նշենք նաև, որ վերը թվարկված կուրսերի համար ուստարվա սկզբին պատրաստվել են ուսանողական տոմսերն ու ստուգման գրքույկները, որոնք բաշխվել են կուրսերի միջև՝ ըստ ուսանողների թվի:

2. Պարտադիր ստուգողական գրավոր աշխատանքների նախապատրաստում և կազմում, դրանց ստուգման և գնահատման վերահսկողություն:

Ուստարվա սկզբին կատարվել են պարտադիր ստուգողական գրավոր աշխատանքների նախապատրաստական աշխատանքները. կազմվել են «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն» առարկաների պարտադիր ստուգողական գրավոր աշխատանքների բլանկները, դրանք հաստատվել են ամբիոնների վարիչների և ուսումնական գծով տնօրենի տեղակալի կողմից: Ստուգողական գրավորներ աշխատանքներն առաջադրանքներն ու բնագրերը ընտրվել և կազմվել են վերը նշված առարկաների առարկայական ծրագրերին համապատասխան: Ուսումնական մասով տնօրենի տեղակալի կողմից ստուգողական գրավոր աշխատանքների անցկացման համար կազմվել է գրաֆիկ, և բոլոր աշխատանքները տրվել են գրաֆիկում նշված ժամանակացույցին համապատասխան:

Հոկտեմբերի 15-ից ԱՊԲ-ում դասերն անցել են հեռավար տարբերակով և պայմանավորված այդ հանգամանքով՝ գրավոր աշխատանքները ևս անցկացվել են հեռավար, իսկ երկրորդ կիսամյակում դասերն անցել են օֆլայն ռեժիմով, և գրավոր աշխատանքները տրվել են սովորականի պես:

Բոլոր աշխատանքների ստուգումն իրականացվել է գնահատման չափանիշներին համապատասխան:

Պարտադիր ստուգողական գրավոր աշխատանքների ընդհանուր և որակական առաջադիմությունը.

Ծանոթություն՝

Աճ – 
Նվազում – 
Կայուն – 

Աղյուսակ N⁰¹.

Մասնագիտություն	Առարկա	Որակական արագճարի	Ցուցանիշ	Որակական արագճարի	Ցուցանիշ	Ընդհանուր արագճարի	Ցուցանիշ	Ընդհանուր արագճարի	Ցուցանիշ	Դասախոս
		I կիս.		II կիս.		I կիս.		II կիս.		
Ֆինանսներ	Հայոց լեզու 1	96%	↑	82%	↑	92%	↑	88%	↑	Գ. Ստեփանյան
	Հայոց լեզու 2	100%		91%	↑	96%		96%		Գ. Ստեփանյան
Հ/հ	Հայոց լեզու 1	71%	↓	56%	↓	83%	↑	82%	↑	Գ. Ստեփանյան
	Հայոց լեզու 2	62%		52%		90%		89%		Գ. Ստեփանյան
Սպ/կ	Հայոց լեզու 1	68%	↑	60%	↑	93%	↓	85%	↑	Գ. Ստեփանյան
	Հայոց լեզու 2	84%		78%		83%		85%		Գ. Ստեփանյան
Համ.գեղ.նախ.	Հայոց լեզու 1	62%	↑	83%	↑	87%	↑	80%	↑	Գ. Ստեփանյան
	Հայոց լեզու 2	93%		85%		93%		86%		Գ. Ստեփանյան
Հ/ծ	Հայոց լեզու 1	90%	↓	25%	↑	95%	↓	70%	↑	Գ. Վարդանյան
	Հայոց լեզու 2	90%		61%		90%		76%		Գ. Վարդանյան
Շուկայաբան.	Հայոց լեզու 1	85%	↓	66%	↓	95%	↓	78%	↑	Ն. Սաիլյան
	Հայոց լեզու 2	84%		66%		87%		91%		Ն. Սաիլյան
Նդ/կ	Հայոց լեզու 1	85%	↓	100%	↓	100%	↓	78%	↑	Ն. Սաիլյան
	Հայոց լեզու 2	85%		100%		100%		85%		Ն. Սաիլյան
Կդ	Հայոց լեզու 1	30%	↑	25%	↓	100%	↓	66%	↑	Գ. Վարդանյան
	Հայոց լեզու 2	70%		22%		90%		100%		Գ. Վարդանյան
Դեղ	Հայոց լեզու 1	60%	↓	60%	↑	100%	↓	100%	↓	Գ. Վարդանյան
	Հայոց լեզու 2	60%		100%		100%		100%		Գ. Վարդանյան
Խ/գ 9-ամյա	Հայոց լեզու 1	0%	↑	30%	↑	50%	↑	71%	↓	Ն.Հարությունյան
	Հայոց լեզու 2	36%		60%		78%		71%		Ն.Հարությունյան
Գինի 9-ամյա	Հայոց լեզու 1	38%	↑	37%	↓	90%	↓	80%	↓	Գ. Վարդանյան
	Հայոց լեզու 2	94%		31%		90%		80%		Գ. Վարդանյան

Աղյուսակ N°2.

Մասնագիտություն	Առարկա	Որակական առաջադրյալներ	Ցուցանիշ	Որակական առաջադրյալներ	Ցուցանիշ	Ընդհանուր առաջադրյալներ	Ցուցանիշ	Ընդհանուր առաջադրյալներ	Ցուցանիշ	Դասախոս
		I կիս.	Ցուցանիշ	II կիս.	Ցուցանիշ	I կիս.	Ցուցանիշ	II կիս.	Ցուցանիշ	
Ֆինանսներ	Հայ գրակ. 1	91%	↑	76%	↑	85%	↑	68%	↑	Գ. Ստեփանյան
	Հայ գրակ. 2	84%		100%	↑	96%		88%	↑	Գ. Ստեփանյան
Հ/հ	Հայ գրակ. 1	75%	↑	30%	↑	83%	↓	82%	↑	Գ. Ստեփանյան
	Հայ գրակ. 2	90%		35%		69%		93%		Գ. Ստեփանյան
Սպ/կ	Հայ գրակ. 1	79%	↓	58%	↑	80%	↓	70%	↑	Գ. Ստեփանյան
	Հայ գրակ. 2	55%		60%		73%		92%		Գ. Ստեփանյան
Համ.գեղ.նախ.	Հայ գրակ. 1	91%	↓	77%	↑	85%	↑	87%	↓	Գ. Ստեփանյան
	Հայ գրակ. 2	84%		80%		96%		67%		Գ. Ստեփանյան
Հ/ծ	Հայ գրակ. 1	59%	↑	58%	↑	90%	↓	70%	↑	Գ. Վարդանյան
	Հայ գրակ. 2	80%		60%		80%		88%		Գ. Վարդանյան
Շուկայաբան.	Հայ գրակ. 1	77%	↓	52%	↑	95%	↓	91%	↓	Ն. Սահլյան
	Հայ գրակ. 2	66%		68%		100%		82%		Ն. Սահլյան
Ուղ/կ	Հայ գրակ. 1	71%	↑	100%	—	100%	—	85%	↑	Ն. Սահլյան
	Հայ գրակ. 2	89%		100%		100%		92%		Ն. Սահլյան
Կդ	Հայ գրակ. 1	40%	↓	33%	↑	100%	—	100%	↓	Գ. Վարդանյան
	Հայ գրակ. 2	0%		42%		70%		77%		Գ. Վարդանյան
Դեղ	Հայ գրակ. 1	100%	↓	60%	↑	100%	—	100%	—	Գ. Վարդանյան
	Հայ գրակ. 2	60%		100%		100%		100%		Գ. Վարդանյան
Խ/գ 9-ամյա	Հայ գրակ. 1	0%	↑	50%	↑	50%	↑	85%	↓	Ն.Հարությունյան
	Հայ գրակ. 2	40%		66%		71%		64%		Ն.Հարությունյան
Գինի 9-ամյա	Հայ գրակ. 1	42%	↑	46%	—	90%	—	75%	—	Գ. Վարդանյան
	Հայ գրակ. 2	77%		46%		90%		75%		Գ. Վարդանյան

Աղյուսակ N°3.

Մասնագիտություն	Առարկա	Որակական առաջադրյալներ	Ցուցանիշ	Որակական առաջադրյալներ	Ցուցանիշ	Ընդհանուր առաջադրյալներ	Ցուցանիշ	Ընդհանուր առաջադրյալներ	Ցուցանիշ	Դասախոս
-----------------	--------	------------------------	----------	------------------------	----------	-------------------------	----------	-------------------------	----------	---------

		I կիս.		II կիս.		I կիս.		II կիս.		
Ֆինանսներ	Հանր. 1	86%	↑	88%	↓	100%	↓	100%	↓	Լ. Մարտիրոսյան
	Հանր. 2	96%		88%		100%		100%		Լ. Մարտիրոսյան
Հ/հ	Հանր. 1	29%	↑	42%	↓	82%	↑	100%	↓	Լ. Մարտիրոսյան
	Հանր. 2	62%		40%		100%		100%		Լ. Մարտիրոսյան
Սպ/կ	Հանր. 1	80%	↓	70%	↓	100%	↓	100%	↓	Դ. Բաբայան
	Հանր. 2	70%		66%		93%		100%		Դ. Բաբայան
Համ. գեղ. նախ.	Հանր. 1	73%	↑	75%	↓	100%	↓	80%	↑	Ռ. Այվազյան
	Հանր. 2	77%		71%		87%		91%		Ռ. Այվազյան
Հ/ծ	Հանր. 1	70%	↓	46%	↑	89%	↓	94%	↓	Մ. Գևորգյան
	Հանր. 2	68%		50%		84%		94%		Մ. Գևորգյան
Շուկայաբան.	Հանր. 1	55%	↑	37%	↑	83%	↑	83%	↓	Հ. Խաչատրյան
	Հանր. 2	57%		53%		88%		83%		Հ. Խաչատրյան
Նդ/կ	Հանր. 1	100%	↓	100%	↓	100%	↓	100%	↓	Դ. Բաբայան
	Հանր. 2	100%		100%		100%		100%		Դ. Բաբայան
Կդ	Հանր. 1	33%	↓	42%	↓	100%	↓	77%	↑	Դ. Բաբայան
	Հանր. 2	33%		33%		100%		100%		Դ. Բաբայան
Դեղ	Հանր. 1	80%	↓	80%	↓	100%	↓	100%	↓	Դ. Բաբայան
	Հանր. 2	80%		80%		100%		100%		Դ. Բաբայան
Խ/գ 9-ամյա	Հանր. 1	14%	↓	25%	↑	50%	↓	78%	↓	Դ. Բաբայան
2020-2021 ուստարում համագործակցության պայմանագիր է կնքվել «ՎՏԲ-Հայաստան» բանկ ՓԲԸ-ի հետ:

Պրակտիկաների ընթացքում «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսանողները կարողացել են իրենց լավագույնս դրսևորել պրակտիկայի անցկացման վայրերում՝ ձեռք բերելով պրակտիկաների վայրերի կողմից նշանակված ղեկավարների և կոլեկտիվի հարգանքն ու վստահությունը: Ուսանողները պարտաճանաչ կերպով հաճախել են պրակտիկաներին, ցույց տվել իրենց տեսական գիտելիքները, գործնական աշխատանքներ կատարել և փորձել են հնարավորինս շատ հմտություններ ձեռք բերել պրակտիկաների ընթացքում: <<Շուկայաբանություն>> մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողներից մեկը պրակտիկայի կեսից արդեն իսկ անցել է աշխատանքի: Իսկ որոշ ուսանողներ նաև ստացել են աշխատանքի հրավերներ բանկերից, ապահովագրական ընկերություններից , արտադրական հիմնարկներից և մանկապարտեզներից :

Գրադարանային խորհուրդ

Գրադարանը հասարակական կառույց է, որը ներառում է տեղեկատվական և մշակութային բաղադրիչներ և դրանով նպաստում է ինչպես տեղեկատվության զարգացմանը, այնպես էլ արթնացնում է սեր ընթերցանության և գրքի հանդեպ: ԱՊԲ-ի գրադարանը կազմված է գրադարանային խորհրդից, որում ներառված են խորհրդի անդամներն ու նախագահը:

Գրադարանային խորհուրդը իրականացնում է տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական գործունեություն: ԱՊԲ-ի գրադարանը ունի համակարգված հավաքածու և այն տրամադրում է ուսանողներին, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմին՝ ժամանակավոր օգտագործման համար:

Գրադարանի առաջնահերթ խնդիրն է կազմակերպել գրականության վերաբերյալ տեղեկատվություն՝ ընթերցողներին լավագույնս սպասարկելու համար, ինչպես նաև նպաստել քոլեջում իրականացվող ուսումնադասատիարակչական աշխատանքներին:

2020-2021 ուստարվա աշխատանքային պլանով գրադարանային խորհուրդը իրականացրել է՝

- պատի թերթի պատրաստում գիտելիքի և դպրության օրվա առթիվ
- գրադարանային խորհրդի նիստերի կազմակերպում և անցկացում
- ԿԱՀ-ում բոլոր առաջին կուրսերի անձնական տվյալների մուտքագրում
- առաջին կուրսերի դպրոցական գրականության սպասարկման աշխատանքների կազմակերպում
- գրքերը չբավարարելու դեպքում այլ գրադարաններից գրքերի ձեռքբերում
- արհեստագործական բաժնի կուրսերում մասնագիտական գրականության սպասարկման աշխատանքների կազմակերպում
- նոր ընդունված ուսանողների ծանոթացումը գրադարանից օգտվելու կանոններին
- պատի թերթի պատրաստում՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 29-ամյակին
- պատի թերթի պատրաստում՝ նվիրված Ուսուցիչների տոնին

- Հրանտ Մաթևոսյանի 85-ամյակին նվիրված ընթերցանության ժամի անցկացում՝ «Աշնան արև»
- ընթերցանության ժամի անցկացում՝ նվիրված Ավետիք Իսահակյանի ծննդյան 145-ամյակին
 - պատի թերթի պատրաստում՝ նվիրված Ուսանողների միջազգային օրվան
- ուսանողներից 10-րդ դասարանի դասագրքերի հետ ընդունում և 11-րդ դասարանի դասագրքերի տրամադրում
- պատի թերթի պատրաստում՝ Նոր տարվա առթիվ
- գրադարանային խորհրդի նիստերի կազմակերպում և անցկացում
- պատի թերթի պատրաստում՝ Նանակի օրվա առթիվ «Շնորհավոր տոնդ հայ զինվոր» խորագրով
- առաքելական եկեղեցու Սուրբ Սարգիս զորավարի տոնի առթիվ պատի թերթի պատրաստում «Սիրո մեր հովանավորը» խորագրով
- Մայրենի լեզվի և Գիրք նվիրելու օրվա առթիվ պատի թերթի պատրաստում «Մեր աղոթքի լեզուն» խորագրով
- Կանանց տոնի առթիվ պատի թերթի պատրաստում «Շնորհավոր տոնդ Հայուհի» խորագրով
- Մայրության և գեղեցկության տոնի առթիվ պատի թերթի պատրաստում «Մայր իմ անուշ ու բարի» խորագրով
- Հայոց ցեղասպանության 106-րդ տարելիցին նվիրված պատի թերթի պատրաստում
- «Հաղթանակների մայիս» խորագրով պատի թերթի պատրաստում՝ նվիրված հաղթանակի և խաղաղության տոնին
- Հայկական պետականության վերականգնման օրվա առթիվ պատի թերթի պատրաստում

- ավարտական կուրսերին նվիրված պատի թերթի պատրաստում «Մեր շրջանավարտները» խորագրով

- գրադարանային խորհրդի տարեվերջյան նիստի կազմակերպում և անցկացում

Ացկացվել են գրադարանային խորհրդի նիստերը բոլոր անդամների մասնակցությամբ, արձանագրվել է անցկացման ամսաթիվը, նիստերին ներկա անձանց անվանացանկը, նիստերի օրակարգը, նիստերի անդամների ելույթները, օրակարգի վերաբերյալ ընդունված որոշումները ստորագրվել են խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից:

Այսպիսով՝ վերոնշյալ կետերը առանձնակի ուշադրությամբ և հավուր պատշաճի կատարվել են գրադարանային խորհրդի կողմից, բոլոր պատի թերթերը և նշված ծրագրերը ներկայացվել են ըստ նախատեսված աշխատանքային պլանի:

Գրադարանային խորհրդի աշխատանքները նշված կետերով չեն սահմանափակվել, կատարվել են նաև լրացուցիչ աշխատանքներ, անցկացվել են միջոցառումներ, որոնք միտված են եղել բարձրացնելու ուսանողների գեղագիտական ճաշակը՝ նպաստելով գեղագիտական և հայրենասիրական դաստիարակության առաջնահերթության ընկալմանը:

Այս ուսումնական տարում ևս գրադարանային խորհուրդը ըստ արժանվույն իր ակտիվ մասնակցությունն ունեցավ նաև ուսումնական գործընթացում՝ նպաստելով դրա դյուրին իրականացմանը, միևնույն ժամանակ իր ուրույն տեղն ու դերն ունեցավ քոլեջում տեղի ունեցող բազմաբովանդակ միջոցառումներին, որոնց շրջանակում ուսանողական խորհրդի ակտիվ մասնակցությամբ անցկացվեց միջոցառում՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին, ինչպես նաև անցկացվեց Հովհաննես Թումանյանի ծննդյան և, միևնույն ժամանակ, Գիրք նվիրելու օրվա առթիվ միջոցառում «Նվիրիր գիրք» խորագրով: Տոնին ընդառաջ տնօրինության, դասախոսների, ուսանողների կողմից գրադարանին հանձնվեցին բազմաթիվ գրքեր, որոնց շնորհիվ գրադարանային ֆոնդը հարստացվեց 98 օրինակ մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, իչպես նաև պատվիրված դպրոցական 120 օրինակ դասագրքերով՝ Հայոց լեզու (հումանիտար հոսքի 10րդ)-30 օրինակ, Հայ գրականություն (հումանիտար հոսքի 10րդ) -30 օրինակ, Հայոց պատմություն (ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքի 10րդ)-30 օրինակ, Հասարակագիտություն 10րդ -30 օրինակ:

Միջոցառումների շարքին դասվում են նաև այն պատի թերթերը, որոնք լույս ենք ընծայվում ամեն ամիս, թեման ընտրվում են տվյալ ամսում հիշարժան օրերին

համապատասխան, դրանք մեր ազգային, եկեղեցական, հոբելյանական օրերն ու տոներն են: Քոլեջի պատի թերթի թեմատիկան համապատասխանում է նաև ԱՔՊ-ում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ձևին և բովանդակությանը և դրանով նպաստում է այդ աշխատանքների արդյունավետ և որակյալ իրականացմանը:

Գրադարանային խորհուրդը համագործակցում է նաև արհեստագործական բաժինների հետ՝ ապահովելով մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, խթանելով ընթերցանության զարգացումը: Այս ուսումնական տարում բոլոր աշխատանքների հետ մեկտեղ պահպանվել են սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային բոլոր պայմանները:

Մանկավարժ-հոգեբանի կատարված աշխատանքները

Ուսումնական տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կուրսերում իրականացվեցին ինքնաճանաչմանն ուղղված թերապևտիկ աշխատանքներ, որոնք միտված էին ուսանողներին փոխանցել միջինից բարձր ինքնագնահատական, կուրսերում բարելավել միջանձնային շփումը, որոնք նպաստեցին համագործակցության հմտությունների զարգացմանը:

Առաջին կուրսերում աշխատանքները սկսվեցին ես-ի ճանաչման և դրսևորման ուղղությամբ: Պրոյեկտիվ առաջադրանքներով ուսումնասիրվեց միջավայրի ազդեցությունը ես-ի ձևավորման վրա, քննարկվեցին ես-ի տեսակները, անհատականություն ձևավորելու հիմնական սկզբունքները և ընկալման մակարդակը, որը կնպաստի ինքն իրեն հեշտորեն ճանաչելուն և հաղորդակցման մեջ ինքնադրսևորման զարգացմանը: Ինքնաճանաչման թեմատիկ հանդիպումներին հաջորդեցին գործնական վարժությունները և ամրապնդող առաջադրանքները:

Նեյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ուսումնասիրվեցին դրական հաղորդակցման առանձնահատկությունները, որոնք ամրապնդում են հաղորդակցման մեջ շփման խնդիրները, կոնֆլիկտային, սթրեսային իրավիճակներում հուզական ինտելեկտը և խնդիրների հաղթահարման այլընտրանքային տարբերակների գտնելը:

Սովորաբար նման խնդիրները ի հայտ են գալիս առաջին կուրսում, երբ ուսանողները անձնային զարգացման ոչ կայուն փուլում են դեռ:

Հունվար-փետրվար ամիսներին տեղի ունեցան հույզերի և զգացմունքների թերապևտիկ հանդիպումներ, որոնք գրեթե բոլոր կուրսերում անհրաժեշտ անդրադարձի կարիք ունեցող թեմատիկաներն էին: Թեման ներառում է դրական և բացասական հույզերը, հույզերի ապրումն ու կառավարումը, հույզերի ազդեցությունը մարմնի մասերի և օրգան-համակարգերի վրա, հուզական ինտելեկտ:

Քանի որ դեռահասության շրջանում ոչ կայուն հուզական վիճակները հաճախ են դրսևորվում, հիմնական խնդիրները՝ անձնային և միջանձնային, դրսևորվում են հույզի ոչ հավասարակշռված վիճակից: Մարտ-ապրիլ ամիսներին անդրադարձ կատարվեց «անձ», «անհատ», «անհատականություն» հասկացություններին, տեսակի ձևավորման վրա ազդող ֆիզիոլոգիական և սոցիալական գործոններին:

Մայիս-հունիս ամիսներին անդրադարձ կատարվեց նախաքննական վախերին, տագնապներին, դրանց տարբերակիչ հատկանիշներին, տեսակներին, վախերի հաղթահարման ուղիներին:

Կուրսեղների հետ ունեցանք նաև թերապևտիկ բնույթի աշխատանքներ, որոնց հիմնական նպատակը կուրսերում բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովման, ուսանողների վարքային առանձնահատկություններին գրագետ անդրադարձն է:

2021-2022 ուստարվա ընթացքում նախատեսվում են հանդիպումներ ծնողական համայնքի հետ՝ ուսանող-դասախոս-ծնող կապի ամրապնդման և արդյունավետ ուսումնական գործընթացն ապահովելու համար:

Մեթոդխորհրդի 2020-2021 ուստարվա կատարած աշխատանքները

Քուլեջի մեթոդական խորհրդի բարեփոխումների և զարգացման ծրագրի հաջողությունն ու արդյունավետությունը մեծապես պայմանավորված է դասախոսների

մասնագիտական պատրաստվածությունից, բարձրակարգ կրթական նվաճումներն առաջնորդելու և կյանքի կոչելու նրանց ընդգրկվածությունից ու պատրաստակամությունից: Կրթության մեջ շարունակ տեղի են ունենում բարեփոխումներ և ուսանողների հետաքրքրության և ուսումնառության արդյունքների բարձրացման նպատակով փորձում ենք դասապրոցեսին ինտեգրել նորարարական մեթոդներ:

2020-2021 ուստարվա աշխատանքային պլանով մեթոդխորհուրդը նախատեսել էր՝

- առարկայական ծրագրերի ուսումնասիրում, ծանոթացում նոր չափորոշիչներին, մասնագիտությունների պլաններին, մոդուլային և առարկայական ծրագրերի նախագծերին,
- օրացուցային թեմատիկ պլանների հետ դասամատյանների գրանցումների համապատասխանության վերահսկում,
- մանկավարժական և գաղափարադաստիարակչական աշխատանքների պլանների մշակում,
- ամբիոններում բաց կամ օրինակելի դասերի կազմակերպում, դասավանդման մեթոդների կիրառման վերահսկում, սկսնակ դասավանդողներին՝ մասնագիտական հմտությունների ձեռք բերման գործում օժանդակումը, արդի տեխնիկական միջոցներն օգտագործելու միջոցառումների մշակումն ու իրականացումը,
- մասնակցումը ամբիոնների աշխատանքային պլաններով նախատեսված դասալսումներին, դրանց վերլուծում և քննարկում, որոնց ժամանակ կարևորվում են ուսուցման նոր մեթոդները՝ որպես կրթական գործընթացի կարևոր բաղադրիչ:

Այսպիսով՝ ուստարվա սկզբին կազմակերպվել է ուսումնական հաստատության մեթոդական աշխատանքը՝ վերլուծելով ուսումնական հաստատության ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքը: Նիստերի ժամանակ առաջարկություններ են ներկայացվել կրթական գործընթացի և մեթոդական աշխատանքի արդյունավետության բարձրացման համար: Համակարգվել են մեթոդական նյութերը ,որոնց հիման վրա կազմվել են տեղեկատվական նյութեր: Ընդհանրացվել և միջոցներ են ձեռնարկվել քոլեջի մանկավարժական աշխատողների արդյունավետ փորձը տարածելու համար: Ըստ պլանի նախատեսվել է 5 ամբիոնի նիստ՝ 2-ը առաջին կիսամյակում, 3-ը՝ երկրորդ: Բոլոր նիստերն անցկացվել են ժամանակին, առկա են բոլոր հայտարարություններն ու արձանագրությունները: Նախատեսվել է 6 մեթոդական զեկուցում՝ 3-ը առաջին կիսամյակում, 3-ը՝ երկրորդ:

1. Սկսնակ դասավանդողների որակավորման բարձրացման նպատակով վարած մենթորության ծրագրի քննարկում:

Զեկուցող Ռ. Այվազյան

2. Ինֆորմատիկա առարկայի դասավանդման մեթոդները:

Զեկուցող Ն. Գասպարյան

3. Փրփրուն գինու տեխնոլոգիա :

Ձեկուցող Տ. Գևորգյան

4. Դասախոսի առաջավոր փորձի ուսումնասիրում, ընդհանրացում և ներդրում պրակտիկ աշխատանքում:

Ձեկուցող Ա.Սահակյան

5. Ռուսերենի ուսուցման ավանդական և նորարարական մոտեցումներ:

Ձեկուցող Լ.Կարապետյան

6.Սեմինար՝ դասախոսների մասնագիտական և մեթոդական հմտությունների ապահովման նպատակով:

Ձեկուցող Մ.Խաչատրյան

Արդյունքում՝

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր կուրս տարբեր է: Մի կուրսում աշխատող մոտեցումը կարող է մի այլ կուրսում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է դասախոսը: Հաշվի առնելով միջին մասնագիտական կրթության ոլորտում ներկայացվող կրթական պահանջները՝ սովորողների հետաքրքրության և ուսումնառության արդյունքների բարձրացման նպատակով կիրառել դասավանդման լայնորեն տարածված թիմային մեթոդը, ինչն էլ հնարավորություն կտա իրականացնել մենթորության ծրագիր, որի ժամանակ մեր քոլեջի ավելի գիտակ և փորձառու մանկավարժները կօգնեն և կուղղորդեն սկսնակ դասավանդողներին՝ ապահովելով փոխգործակցություն և ընդհանուր նպատակների ամրապնդում:

Անցկացված բաց դասերի վերաբերյալ վերլուծություն.

- դասախոսություններն ապահովում էին անհրաժեշտ մանկավարժական և մասնագիտական բարձր մակարդակ, ընդգրկում էին վերլուծական , քննադատական և համեմատական տարրեր
- դասապրոցեսներն անցնում էին օրացուցային պլանով՝ պահպանելով թեմայի կառուցվածքը, ներկայացվում էին դասի նպատակները, խնդիրները և ակնկալիքները,
- դասախոսներն ունեին խոսքի մշակույթ, ինքնավստահ էին՝ ապահովելով ուսանող-դասախոս համագործակցության բարձր մակարդակ,
- դասախոսները տրամադրում էին համապատասխան դիդակտիկ նյութեր, զննական նյութեր, մասնագիտական գրականություն , ուսումնասիրվող թեմայի և՛ տեսական, և՛ ժամանակակից տեխնոլոգիաներով ներկայացրած նյութեր (սահիկահանդեսներ),

- դասախոսները կարողանում էին լսարանի ուշադրությունը պահել մինչև դասի վերջը, ստեղծել քննարկումների համար անկաշկանդ մթնոլորտ, ուղղորդում էին ուսանողներին՝ եզրահանգումներին ինքնուրույն հասնելուն,
- ուսանողները կարողանում էին իրենց կատարած անհատական, գործնական աշխատանքներին գրագետ հիմնավորում տալ, պատասխանել միջառարկայական կապ ստեղծող բոլոր հարցերին,
- դասախոսներն աչքի էին ընկնում դասի արդյունավետ վարման իրենց հմտություններով և կիրառում էին դասավանդման ժամանակակից մեթոդներ:

Անվիճելի է, որ բաց դասերի անցկացման այս գործընթացը մի առաջընթաց քայլ է և նպատակ ունի բարձրացնել դասավանդման և կրթական ծառայությունների մատուցման որակը և արդյունավետությունը:

Քոլեջում պարբերաբար կազմակերպվող կարճատև (համավարակով պայմանավորված), բայց թեմատիկ միջոցառումները սովորողների մոտ ապահովել են այն գեղագիտական բացը, որ ունեցավ ներկա ժամանակներում մեր մատաղ սերունդը:

Գրադարան-ընթերցասրահում անցկացվեցին գեղագիտական տարրեր պարունակող միջոցառումներ՝ նվիրված Գիրք նվիրելու օրվան և Մայրության և գեղեցկության տոնին: Ուշագրավ էր նաև «Ֆինանսներ» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողների և կուրսդեկ Սուսաննա Աբրահամյանի՝ առաջին կուրսերի ուսանողների համար կազմակերպած «Բրեյն Ռինգ» խաղ-մրցույթը բնագիտական մի քանի առարկաներից:

Ուսումնական տարին ամփոփվեց սովորողների արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը ձևավորող, նրա ստեղծագործական ունակությունները զարգացնող, հայրենասիրության և հայրենաճանաչման գաղափարները բարձր պահող 3 տպավորիչ միջոցառումներով:

Վարչատնտեսական աշխատանքների 2020-2021 ուստարվա կատարած աշխատանքների հաշվետվությունը

2020-2021 ուստարվա I և II կիսամյակներում դասապրոցեսը միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ պատշաճ մակարդակով անցկացնելու համար 2020թ. օգոստոս ամսվա վերջում քոլեջի ուսումնական մասնաշենքի կաբինետները և լսարանները բերվել են առարկաների ծրագրերի պահանջին համապատասխան, բարվոք տեսքի:

Covid-19-ի կապակցությամբ, ՀՀ կառավարության որոշումների համաձայն՝ քոլեջի տնօրինությունը ձեռք է բերել անհրաժեշտ քանակի փստահանիչ նյութեր, հակահիգիենիկ անհրաժեշտ պարագաներ՝ դիմակներ, ձեռնոցներ, սպիրտային լուծույթներ և այլն:

Օրը երկու անգամ ախտահանվել են քոլեջի ուսումնական մասնաշենքի կաբինետները, լսարանները, սանհանգույցները, միջանցքները, ուսումնական մասնաշենքին կից բակը և այլն:

Հսկվել են՝

1. քոլեջում կատարվող մասնակի վերանորոգման աշխատանքային գործառույթները,
2. համապատասխան փաստաթղթերի կազմման և վերանորոգման աշխատանքների իրականացումը:

Պահանջվող ժամանակահատվածում իրականացվել են քոլեջի գույքի տարեկան գույքագրման աշխատանքները պատասխանատու աշխատողների մոտ:

Պատշաճ մակարդակով պահանջվող ժամանակահատվածում օրենքի սահմաններում իրականացվել են ձմռան նախապատրաստական և քոլեջի ուսումնական մասնաշենքի ջեռուցման գործառույթները հակահրդեհային միջոցառումների կիրառման ռեժիմի խստացմամբ, հսկողության աշխատանքների իրականացմամբ:

Օնլային կրթական ծրագրով դասապրոցեսը իրականացնելիս ամբողջ ժամանակահատվածում քոլեջում ապահովվել է անհրաժեշտ գործող տեխնիկական սարքավորումների և սարքերի անխափան աշխատանքը:

Պատշաճ մակարդակով հսկվել է և իրականացվել քոլեջի ուսումնական մասնաշենքում աշխատանքային և սանիտարահիգիենիկ կարգապահությունը, բուժկետի աշխատանքը:

Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել քոլեջի ֆինանսատնտեսական գործունեության օրենքով նախատեսված գործառույթների իրականացման և տնօրինության կողմից կազմակերպած տարբեր միջոցառումներին:

2020-2021թթ. քոլեջի գնումների պլանի համաձայն՝ քոլեջին անհրաժեշտ ապրանքների, գույքի, շինանյութերի, դեղամիջոցների ձեռքբերման, տարբեր ծառայությունների գործառույթների իրականացման համար քոլեջի տնօրինությունը կնքել է պայմանագիր՝ ըստ գործող օրենքների, անհատ ձեռնարկատերերի, կազմակերպությունների հետ՝ քոլեջին անհրաժեշտ տարբեր գնումներ և գործառույթներ իրականացնելու նպատակով: Կատարված գնումները, ծառայությունները պարզ երևում են գնման հաշիվ վավերագրերի ապրանքագրերի, կատարողական ակտերի, երկկողմ կնքված պայմանագրերի առկայությամբ:

Չինդեկի, ՔՊ շտաբի աշխատանքները

2020թ-ի ուսումնական տարեկազմին նախորդող ժամանակահատվածը սկսվել է ՀՀ ԿԳՄՍՆ 18.06.2020թ.-ի №02/08.1/15004-20 հանձնարարականի իրականացմամբ՝ տնօրենի անմիջական ղեկավարությամբ (քոլեջի տնօրենի №S/51/Ա 19.06.2020թ. հրաման): 2020թ սեպտեմբերի 1-ին նախորդել են նաև կաբինետի կահավորման նախապատրաստական աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացը կազմակերպող ու կարգավորող փաստաթղթերի մշակումը: Ըստ ՀՀ ԿԳՄՍՆ № 02/10.1/19-2021 01.08.2021թ հանձնարարականի՝ ուսումնական տարին սկսվել է առկա ձևաչափով՝ միջին և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգի համար Covid-19 պայմաններում նախատեսված հակահամաճարակային և սանիտարահիգիենիկ համապատասխան նորմերով: Այսպես դասերը շարունակվել են մինչև սեպտեմբերի 27-ը՝ Արցախյան պատերազմը:

2021թ-ի հունվարի 13-ից դասերն վերսկսվել են արդեն առկա ձևաչափով: Դասերի անցկացմանը զուգահեռ՝

1. 2021թ-ի հունվար-փետրվար ամիսներին քուլեջի նախազորակոչային տարիքի ուսանողներին տարածքային զինկոմիսարիատում հաշվառելու և կցագրելու համար անց են կացվել համապատասխան փաստաթղթերի հավաքագրում, ցուցակների կազմում (ըստ ցուցումների):
2. 2021թ-ի հունվար-փետրվար ամիսներին Արարատ «ԲԿ ՓԲԸ»-ում իրականացվել է նախազորակոչային տարիքի ուսանողների բուժզննման գործընթացը:
3. 2021թ-ի մարտի 1-ին ՔՊ համաշխարհային օրվա կապակցությամբ քուլեջի դասախոսական անձնակազմի և ուսանողների հետ անց է կացվել դաս-զեկուցում:
4. «ՔՊ և ԱԻ հիմնահարցեր» առարկայի շրջանակներում ըստ ուսումնական վարժանքների ժամանակացույց պլանի՝ քուլեջում 04.03.2021թ-ին անց է կացվել շտաբային ուսումնավարժանք «Երկրաշարժի դեպքում ուսհաստատությունից անձնակազմի տարհանում» թեմայով:
5. 2021թ-ի մարտ ամսին տարածքային զինկոմիսարիատում վերջնականապես ավարտվեց քուլեջի նախազորակոչային տարիքի ուսանողների կցագրումն ու հաշվառումը:
6. ՔՊ նորմատիվները խթանելու, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի ստուգարքին առավելագույն ցուցանիշներ ապահովելու համար ֆիզվեկի հետ քուլեջում 21.05.2021թ-ին կազմակերպել և անց են կացվել մարզական խաղ-մրցույթներ:

Առողջ վերլուծությունն էլ հենց ընկած է կրթության ներքին որակի հիմքում, ինչպես նաև դասախոսի կատարած աշխատանքի սանդղակային ցուցանիշ է: Բացառություն չի կազմում նաև ՆԶՊ և «ՔՊ և ԱԻ հիմնահարցեր» առարկաների դասավանդման պրոցեսը, որը 2020-2021 ուստարում ունեցել է իր ուժեղ կողմերը, ռիսկերը և թույլ կողմերը: Ուժեղ կողմերը՝ քուլեջի զարգացման ծրագրից բխող ճիշտ ռազմավարությունը և հետեվողական վարչարարությունը, որոնք համարյա բոլոր եզրույթներում կոմպեսացնում են ռիսկերը: Նկատի է առնվում Covid-19 պայմաններում հեռավար ուսուցման ռացիոնալ կազմակերպումը: Թույլ կողմերի գերակշիռ մասը ունի սուբիեկտիվ բնույթ՝ հիմնականում հեռավար ձևաչափով դասերին մասնակցող ուսանողների տեխնիկական հնարավորությունների հետ կապված և դրանից բխող գնահատման օբյեկտիվությունը:

Ուսանողական խորհուրդ

Հաշվի առնելով համաճարակով պայմանավորված արտակարգ դրության սահմանափակումները, 2020-2021 ուստարին սկսվեց որոշակի սահմանափակումներով, որն էլ բերեց ուսանողական խորհրդի միջոցառումների և տարբեր կազմակերպադաստիարակչական նիստերի առցանց իրականացմանը: Նիստերում մասնավորապես քննարկվել են ՈՒԽ - ի աշխատանքային պլանով նախատեսված հարցերը.

1. ուսանողական խորհրդի անդամների ընտրության և աշխատանքային հանձնաժողովների ստեղծման հարցերը,

2. 2020-2021 ուսումնական տարվա «Ոսկե աշուն» և «Ուսանողական գարուն» փառատոնի տնօրինության քննարկմանը ներկայացված ծրագիրը, որը ներառում է՝

ա/ «Գիտելիքների օրվան նվիրված» միջոցառում,

բ/ «ՀՀ անկախությանը նվիրված» միջոցառում,

- գ/«Հ. Թումանյանի ծննդյանը նվիրված» միջոցառում,
դ/ «Հայոց Մեծ Եղեռնին նվիրված» միջոցառում,
ե/ «Մայրության և Գեղեցկության տոնին նվիրված» միջոցառում,
3. վատ հաճախող և վատ առաջադիմություն ունեցող ուսանողներին վերաբերվող հարցերի քննարկում,
4. կարգապահական հարցերի քննարկում,
5. կառավարման խորհրդի կազմում ուսանողական խորհրդի ներկայացուցչի ներկայացման հարցի քննարկում,
6. այլ ընթացիկ հարցեր:

Կազմակերպատիարակչական աշխատանքներ

1. 2020-2021 ուսումնական տարվա կուրսղեկական խորհրդի դաստիարակչական աշխատանքների պլանի քննարկում,
2. կուրսերում բարոյահոգեբանական աշխատանքների կազմակերպում,
3. կուրսերում ուսանողների գիտակցական կարգապահության և վարքի ձևավորման խնդիրների ուղղությամբ աշխատանքներ ,
4. կուրսղեկ-դասավանդող դասախոս խորհրդակցությունների, կուրսղեկական ժամերի անցկացման,
5. մասայական, հասարակաքաղաքական աշխատանքների գեղագիտական դաստիարակության ուղղությամբ տարված աշխատանքներ,

5. ուսումնական գործընթացի պատշաճ բարելավման գործընթացում ծնողների հետ տարվող աշխատանքներ,
6. կուրսղեկների հաշվետվություններ առաջին կիսամյակում կուրսերում կատարված աշխատանքների վերաբերյալ,
10. քոլեջի պատի թերթերի թեմատիկան և համապատասխանությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների ձևին ու բովանդակությանը,
11. մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները հանրակրթական դպրոցներում, քոլեջի աշխատակազմի խնդիրները,

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

«Որակյալ կրթություն» նշանակում է, որ տվյալ ուսումնական հաստատությունը կրթության միջոցով կարողանում է հիմնականում հասնել իր սահմանած նպատակներին, իսկ մանկավարժական աշխատողները կարողանում են սովորողին հասցնել սահմանված արդյունքներին:

Արարատի պետական քոլեջում կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի 2020-2021 ուսումնական աշխատանքներն սկսել են օգոստոս ամսից ենթակառուցվածքի նիստերի օրակարգի կազմմամբ և հաստատումով, քոլեջի ինստիտուցիոնալ գործընթացի շարունակմամբ: Նիստերի օրակարգի համաձայն նախատեսվել է 4 նիստ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պետության կողմից կրթական ծրագրերին, պետական չափորոշիչներին ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթաց է մասնագիտական ուսումնական բոլոր հաստատությունների համար: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև նախապայման է ծրագրային հավատարմագրման համար: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացն իրեն մասնակից դարձրեց քոլեջի ներքին և արտաքին շահակիցներին: Այն բավականին

ծավալուն էր: Աշխատանքներն սկսվեցին որակի հանձնաժողովի հիմնական կազմի ձևավորմամբ: Վերջինիս կողմից կազմվեց կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից տրամադրված 10 չափանիշների SWOT վերլուծությունը, այնուհետև լրացվեց կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից տրամադրված էլեկտրոնային հարցաշարը: Դրան հաջորդեց քոլեջի ինքնավերլուծության մշակումը՝ հիմնված վերոհիշյալ 10 չափորոշիչների վրա: Այն իր մեջ ներառում է քոլեջի ողջ գործունեությունը, ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու ռիսկերը: ՈԱԱԿ-ին ներկայացնելուց և վերջինիս կողմից նշանակված փորձագիտական խմբի կողմից ներկայացվեց փորձագիտական զեկույց, որը պարունակում էր Արարատի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների: Այստեղ մանրամասնորեն ներկայացվել են յուրաքանչյուր չափանիշի շրջանակում քոլեջի իրականացրած աշխատանքների փաստերը, ապա կատարվել են դատողություններ, եզրակացություններ, խորհրդատվություններ: Համաձայն փորձագիտական նախնական զեկույցի՝ 10 չափանիշներից միայն երեքն է անբավարար գնահատվել՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների: Դրանք են՝ 1. Կառավարում և վարչարարություն, 3. Մասնագիտական կրթական ծրագրեր, 6. Հետազոտություն և զարգացում:

Տրամաբանական շարունակությունը եղավ փորձագիտական զեկույցում արված դատողություններից բխող և խորհրդատվությունների հիման վրա քոլեջի որակի հանձնաժողովի կողմից կազմված բարելավման պլանը: Վերջինս իր մեջ ներառում է բավականին շատ անելիքներ, որոնք ուղղված են քոլեջում որակի մշակույթի ձևավորմանը, որակի ամբողջական կառավարման համակարգի ներդրմանը, քոլեջի ռազմավարական առաջնահերթությունների իրագործման նկատմամբ վերահսկելիության, գնահատման և բարելավման մեխանիզմների ապահովմանը, ինչպես նաև մասնագիտական կրթության որակի բարձրացմանը: Հատկանշական է, որ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի ամենադրական ազդեցություններից էր այն, որ որակի ապահովման ուսումնամեթոդական, ուսանողական և տեխնիկական հանձնաժողովներն սկսեցին մասնակից դառնալ քոլեջի որակի ապահովման գործընթացին: Բարելավման պլանով նախատեսված աշքատանքների մի մասն իրագործվել է. Մշակվել է

- աշխատաշուկայում պահանջարկ ունեցող նոր մասնագիտությունների մշտադիտարկման հայեցակարգ,
- դասավանդման և ուսումնառության մեթոդների գնահատման ձևերի ընտրության և արդիականացման ընթացակարգ և քաղաքականություն,
- դասախոսական անձնակազմի կարիքների վերհանման հստակ մեխանիզմներ և գործիքակազմ,
- ուսումնական հաստատության ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման և խրախուսման քաղաքականություն և գործիքակազմ,
- գործատուների գոհունակության էլեկտրոնային հարցաշար,

- ԱՊԲ-ում իրականացվող կրթական ծրագրերի որակից շրջանավարտների բավարարվածության բացահայտման մեխանիզմներ,

ինչպես նաև վերանայվել է որակի հայեցակարգը և ընթացակարգը, պարբերաբար հարստացվում է քոլեջի կայքէջը:

Կրթության որակի ապահովման ենթակառուցվածքում 2020—2021 ուսումնական տարվա ընթացքում անցկացվել է 4 նիստ, արձանագրվել են բոլոր նիստերը: Ստեղծվել է թղթապանակ բոլոր ստորաբաժանումներում իրականացված նիստերի հաշվետվությունների վերաբերյալ, ստեղծվել է 2020-2021 ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ավարտին արված մոդուլների/առարկանների վերլուծությունների թղթապանակ, ամփոփվել է բոլոր մոդուլների/առարկանների ընդհանուր և որակական առաջադիմությունը, ուսանողների շրջանում անցկացվել և ամփոփվել է ուսուցման որակի գնահատման հարցումը:

Առաջիկայում իրականացվելիք աշխատանքներում պետք է

- կարևորել գործատուների հետ համագործակցության կայունացումն ու շարունակականությունը, կրթական ծրագրերի կազմման գործընթացում նրանց ներգրավումը,
- ամրակայել հետազոտական գործունեությունը,
- համապատասխան ՄԿԾ-ների համեմատում անցկացնել այլ ՄՈՒՀ-երի հետ,
- այլ ՄՈՒՀ-երի հետ համեմատել ՈԱ հայեցակարգը և քաղաքականությունը:

Կառավարման խորհուրդ

2020-2021 ուստարվա կառավարման խորհրդի աշխատանքներն իրականացվել են ըստ աշխատանքային պլանի: Առցանց եղանակով կազմակերպվել են նիստեր, որոնց ժամանակ քննարկվել են բազմաթիվ հարցեր, խնդիրներ ու տրվել լուծումներ: Նիստերի ընթացքում անրադարձ է կատարվել ընդունելության հետ կապված հարցերին, ուստարվա ընթացքում պատշաճ գործունեության կազմակերպման համար աշխատանքային խորհուրդների և հանձնաժողովների ստեղծման, ուսանողներին կրթաթոշակ նշանակելու հարցին:

Կառավարման խորհրդի ամնիջական քննարկման ու կայացրած որոշումների հիման վրա կատարվել են մոդուլային ծրագրերի վերամշակումներ՝ կապված թե՛ ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից մասնագիտությունների ուսումնական պլանների վերանայման և թե՛ քոլեջում նոր մասնագիտությունների լիցենզավորումից հետո առարկայական և մոդուլային ծրագրերի կազմման հետ, որոնք կապահովեն ուսումնական գործընթացի լիարժեք կազմակերպումը:

Կառավարման խորհրդի անդամներն անմիջականորեն մասնակցել են քոլեջի զարգացման ծրագրերի, հեռանկայաին խնդիրների լուծմանը, կատարել ֆինանսատնտեսական հարցերի ընթացիկ վերահսկողություն:

Պատշաճ կազմակերպվեց և իրականացավ քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը:

Կառավարման խորհրդի կողմից վերանայվել, քննարկվել և հաստատվել է միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական համակարգում առկա բոլոր մասնագիտությունների վճարովի համակարգի վարձավճարը չափը, ինչպես նաև՝ կարճաժամկետ ուսուցման դասընթացների վարձավճարի չափը:

Կապված կառավարման խորհրդի կազմում տեղի ունեցող փոփոխությունների հետ՝ տեղի են ունեցել քննարկումներ, առաջադրվել նոր թեկնածուներ ու ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատմանը:

2020 - 2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂԶԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթական համակարգ	ուսանող /թիվ/	ընդամենը գումար
Միջին մասնագիտական	7	90 450
Նախնական մասնագիտական /արհեստագործական/	1	49 500
Օգնություն		358 000

2020 - 2022 ՈՒՍՏԱՐՎԱ ֆինանսավորում

Կրթական համակարգ	բյուջե	արտաբյուջե	ընդամենը /գումար/
	գումար	գումար	
Միջին մասնագիտական	99 702 500	10 107 963	109 810 463
Նախնական մասնագիտական /արհեստագործական/	10 563 700	1 673 200	12 236 900

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020-2021 ուսումնական տարվա աշխատանքները քոլեջում կազմակերպվել են ուսումնական ժամանակացույցին համապատասխան, ուսումնական պլաններով նախատեսված ամբողջ ծրագրային նյութը կատարված է: Կազմակերպվել են պլաններով նաժատեսված ուսումնադաստիարակչական բոլոր միջոցառումները: Ակտիվ աշխատանք է տարվել դասախոսների մասնագիտական և մեթոդական պատրաստվածությունը բարձրացնելու ուղղությամբ:

Գործող լեզվամանկավարժական և տնտեսագիտական բաժիններում աշխատանքները կատարվել են լիարժեք, ամենայն պատասխանատվությամբ, բարեխղճորեն: 1-ին կիսամյակում , ճիշտ է կապված հանրապետությունում ստեղծված համավարակային իրավիճակի հետ, լիարժեք չեն իրականացվել նախատեսված պլանային աշխատանքները, սակայն 2-րդ կիսամյակում դրանք իրականացվել են 100%-ով: Անցկացվել է 10-ական նիստ, որից 4-ը՝ հեռավար: Քննարկվել են մեթոդամանկավարժական տարաբնույթ հարցեր /թվով

18 մեթոդական մշակում/։ Ուսումնական տարվա ընթացքում կատարվել է 340 ժամ փոխադարձ դասալսում, 10 բաց դաս, ուսումնասիրվել է 8 առարկայի դրվածք։

Արարատի պետական քոլեջը պատրաստում է բանիմաց, գրագետ և կիրթ մասնագետներ, ովքեր մրցունակ են աշխատաշուկայում։ Նրանց ստացած կրթությունը ձեռք բերած գիտելիքները, հմտությունները և կարողությունները, թույլ են տալիս աշխատելու որակավորմանը համապատասխան։ Քոլեջն տարածաշրջանում բարձր հեղինակություն վայելող ուսումնական հաստատություն է, շրջանավարտների պահանջված են Արարատի տարածաշրջանում և ինչու չէ, նաև նրանից դուրս, ունի որակյալ դասախոսական կազմ, աշխատաշուկայի կողմից պահանջարկ վայելող մասնագիտությունների առկայություն։ Կառավարման ճկուն համակարգի շնորհիվ կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ քոլեջն արագ ադապտացվում է և արձագանքում։

Քոլեջի այս ուսումնական տարվա շրջանավարտները ևս հնարավորություն ունեն, այն ավարտելուց հետո, կրթությունը շարունակելու պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Երևանի պետական համալսարանում, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում։

Այս գործընթացը շատ կարևոր է, քանի որ միջին մասնագիտական կրթական հաստատության շրջանավարտները հնարավորություն են ունենում կրթությունը շարունակելու և բարձրագույն կրթություն ստանալու, իսկ պետական բուհեր ընդունվում և կրթություն են շարունակում արդեն մասնագիտության վերաբերյալ բավական խոր գիտելիքներ ունեցող ուսանողներ։

ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի առաքելությունն է պատրաստել որակյալ մասնագետ-շրջանավարտներ, ովքեր քոլեջն ավարտելուց անմիջապես հետո իրենց տեղը կգտնեն աշխատաշուկայում։

Դրա վառ վկայությունն է նախաավարտական պրակտիկայի ընթացքում մեր ուսանողների աշխատանքի առաջարկը տարբեր գործատուների կողմից, ինչպես նաև ավարտելուց անմիջապես հետո որևէ կազմակերպությունում աշխատանքում ներգրավվելը:

2021-2022 ուստարվա աշխատանքների բարելավման պլանում նախատեսվում են.

1. մոդուլային ծրագրերի կազմման ընթացքում գործափունների ներգրավվածության ապահովումը,
- 3.ապահովել միջին սերնդի դասախոսների համակարգչային տեխնիկայից օգտվելու բարելավումը:
4. ուսանողների թվի հետ կապված շենքային մակերեսի հետ կապված պլանավորում: